ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ _____ Ա. Երեմյան

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի

կառավարման խորհրդի նախագահ

«08» _____ 2023 թվական

# ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

## ԿՏՊՔ ՈՐԱԿԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հրազդան 2023

## 1.Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն ընթացակարգը սահմանում է ԿՏՊՔ Որակի կենտրոնի կողմից ներքին շահակիցների՝ ուսանողների, դասախոսական և վարչական կազմի կարիքների վերհանման, գնահատման մեխանիզմները

1.2 Ընթացակարգը սահմանում է նաև ներքին շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմները

1.3 Սույն ընթացակարգը բխեցված է ԿՏՊՔ-ի ռազմավարությունից և Որակի ապահովման քաղաքականությունից, Որակի կենտրոնի գործունեության կանոնակարգից,

1.4 Կարիքներիգնահատումը ԿՏՊՔ-ում պարբերական գործընթաց է և կազմում է որակի մշակույթի բաղկացուցիչ մասը

1.5 Կարիքների գնահատումները հանդիսանում են որակի ապահովման և տվյալների հավաքագրման մեխանիզմներ

1.6 Սույն ընթացակարգը մշակվել է ԿՏՊՔ Որակի ապահովման ներքին կենտրոնի կողմից, հաստատվել է ԿՏՊՔ կառավարման խորհրդի կողմից

1.7 Սույն ընթացակարգում փոփոխությունները, լրամշակումները, վերանայումները կատարվում են նույն կարգով:

## 2. ԿՏՊՔ-ի ուսանողների կարիքների գնահատում

2.1 Ուսանողների կարիքների գնահատման և հետադարձ կապի մեխանիզմները ԿՏՊՔ-ի Որակի ապահովման քաղաքականության սկզբունքների և խնդիրների շրջանակում են:

2.2 ԿՏՊՔ-ի ուսանողների կարիքների վերհանման օղակները հետևյալն են՝

- Որակի կենտրոնի հարցումներ
- Որակի կենտրոնի ղեկավարի հետ հանդիպում-քննարկումներ

2.3 Որակի կենտրոնը ուսանողների կարիքների գնահատման նպատակով պարբերաբար իրականացնում է կարիքների գնահատման և բավարարավածության հարցումներ, որոնք խմբավորված են հետևյալ կերպ՝

- Հարցումներ և վերլուծություններ առաջին կուրսերի շրջանում
- Ուսանողների բավարարվածության գնահատում պրակտիկաներից
- Ուսանողների բավարարվածության գնահատում ԴՈՒԱԼ պարապմունքներից
- Ուսանողների բավարարվածության գնահատում քոլեջի տարբեր գործընթացներից, ռեսուրսներից, միջավայրից
- Շրջանավարտների բավարարվածության գնահատում ԿՏՊՔ կրթությունից
- Ուսանողների բավարարվածության գնահատում դասախոսների դասավանդումից

2.4 Հարցումների կազմակերպման և անցկացման նպատակով Որակի կենտրոնի կողմից մշակվում են համապատասխան հարցաշարեր, որոնք պարբերաբար վերանայվում են ՝ ըստ անհրաժեշտության և կարիքի,

2.5 Հարցումները հանդիսանում են ԿՏՊՔ-ի Որակի կենտրոնի տարեկան պլանավորման բաղկացուցիչ մաս,

2.6 Ըստ անհրաժեշտության կարող են իրականացվել այլ չպլանավորված հարցումներ,

2.7 ԿՏՊՔ-ի ուսանողական հարցումների և կարիքների գնահատման թիրախում են հետևյալ վերլուծությունները՝

- ԿՏՊՔ-ն ընտրելու շարժառիթները
- Քոլեջի ճանաչելիության, վարկանիշի դիտարկումը հասարակության շրջանում
- ԿՏՊՔ-ից ուսանողների ակնկալիքների ուսումնասիրումը
- Ուսանողների տեղեկացվածության բավահայտումը իրենց իրավունքներից, պարտականություններից, կարգապահական կանոններից, ուսանողներին առնչվող տարբեր կանոնակարգերից, քոլեջի կողմից մատուցվող ծառայություններից,
- Ուսանողների տեղեկացվածության պարզումը իրենց անհրաժեշտ մասնագիտական կոմպենտենցիաներից, կարողություններից, հմտություններից,
- Ուսանողների բավարարվածության պարզումը ուսումնական գործընթացից, դասավանդումից,
- Դասավանդման և ուսումնառության ոլորտում առկա խնդիրների և կարիքների բացահայտումը,
- Ուսանողների կրթական կարիքների վերհանումը, լրացուցիչ խորհրդատվական ծառայությունների կարիքի վերհանումը ,
- Ուսանողների բավարավածության պարզումը քոլեջի դասավանդող կազմի գնահատման մոտեցումներից,
- Ուսանողների բավարավածության պարզումը դասավանդող կազմի մանկավարժական հմտություններից, դասախոս-ուսանող փոխհարաբերություններից,
- Ուսանողների բավարավածության պարզումը դասախոսների առաջադրանքներից, ինքնուրույն աշխատանքներից, հետազոտական և գործնական առաջադրանքներից,
- Ուսանողների բավարավածության պարզումը քոլեջում և այլ կազմակերպություններում կազմակերպվող պրակտիկաներից, պրակտիկաների ընթացքում առկա խնդիրների բացահայտումը, արդյունավետության բացահայտումը,
- Պրակտիկաների բարելավման համար ուսանողների առաջարկների հավաքագրումը,

- ԴՈՒԱԼ ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողների բավարարվածության պարզումը պարապմունքներից,
- Ուսանողների բավարավածության պարզումը կուրսղեկական աշխատանքներից, կուրսղեկական ժամերի արդյունավետության դիտարկումը,
- Ուսանողների բավարարվածության պարզումը տարբեր ստորաբաժանումների աշխատանքներից,
- ԿՏՊՔ-ի սոցիալական էջերի, կայքէջի դիտելիության և արդյունավետության դիտարկումը ուսանողների կողմից ,
- Ուսանողների բավարավածության պարզումը քոլեջի ուսանողական միջավայրից, ռեսուրսներից, սանիտարահիգիենիկ վիճակից, լսարանների կահավորվածությունից,
- Ուսանողների բավարավածության պարզումը քոլեջում կազմակերպվող տարբեր միջոցառումներից,
- Քոլեջի ուժեղ կողմերի և թույլ, բարելավման ենթակա ուղղությունների բացահայտումը ուսանողի տեսանկյունից,
- Շրջանավարտների բավարարվածության դիտարկումը ԿՏՊՔ կրթության որակից, ուսումնառության միջավայրից,
- Իրենց մասնագիտությամբ աշխատող սովորող ուսանողների թվաքանակի ուսումնասիրումը, մասնագիտությամբ աշխատելու պատրաստակամ ուսանողների թվաքանակի պարզումը,
- Շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության դիտարկումը,
- Քոլեջի ամենատարբեր գործընթացների վերաբերյալ ուսանողների առաջարկների, դիտարկումների հավաքագրում ,

2.8.Հարցումների հարցաշարերը մշակվում են ԿՏՊՔ-ի Որակի կենտրոնի կողմից՝ ըստ անհրաժեշտ տվյալների հավաքագրման և ուսումնասիրության ենթակա գործընթացի կարիքի, արդյունքները վերլուծվում, ուսումնասիրվում են Որակի կենտրոնի կողմից, ներկայացվում համապատասխան օղակների,

2.9.Հարցաշարերի մշակմանը ներառվում են նաև ուսանողներ, դասախոսական կազմի ներկայացուցիչներ,

2.10.Հարցումների արդյունքում կատարված փոփոխությունների և բարելավումների ուսումնասիրման և ուսանողների հետ հատադարձ կապի նպատակով Որակի կենտրոնի կողմից կազմակերպվում են հանդիպում-քննարկումներ ուսանողների հետ,

## 3. ԿՏՊՔ-ի անձնակազմի կարիքների գնահատում

3.1 Դասախոսների և անձնակազմի կարիքների գնահատման և հետադարձ կապի մեխանիզմները ԿՏՊՔ-ի Որակի ապահովման քաղաքականության սկզբունքների և խնդիրների շրջանակում են.

3.2 ԿՏՊՔ-ի դասախոսների կարիքների վերհանման օղակները հետևյալն են՝

- Որակի կենտրոնի հարցումներ
- Որակի կենտրոնի մշտադիտարկումներ

3.3Որակի կենտրոնը անձնակազմի կարիքների գնահատման նպատակով պարբերաբար իրականացնում է կարիքների գնահատման և բավարարավածության հարցումներ, որոնք խմբավորված են հետևյալ կերպ՝

- Կառավարչական գործընթացներից դասավանդողների բավարարվածության գնահատում,
- Աշխատանքային միջավայրից և առկա ռեսուրսներից դասախոսների բավարարվածության գնահատում,
- Ամբիոնների և տարբեր օղակների աշխատանքների որակի գնահատումը և բավարարվածությունը դասախոսների կողմից,
- Անձնակազմի, դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ կազմի կարիքների վերհանումը, գնահատումը:

**Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրենի պարտականությունները կատարող՝ Վ. Թուլմասյան**